

ՏԱՍԵՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանի նամակները:
Օտարաբարակները գինում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւն ընդունելու է ամեն լեզուով:
Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆՊԱՎՈՒԹԻՒՆ

Ներքին Տեսչութիւն: Նամակ Արաբիայից:
Նամակ Արաբիայից: Ներքին Լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ: Գարնանի թաղումը: Աւստրո-Ռուս
գարնա: Գերմանիա: Բոսնիա և Հերցեգովինա:
Նամակ Թիւրքիայից: Արտաքին Լուրեր:—ՍՈՒՆ
ԼՈՒՐԵՐ:—ՀՆՈՒՄԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Երկրագործ մշակների
գաղթականութիւնը Թիւրքիայից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՍՆԱՅԻՍՅՈՒՅԻՑ

Ապրիլի 21-ին

Կայ արդեօք մի միջոց սխալեցնելու Արաբի-
այիցներին անտարբերութեան քննից մեր մէջ լրա-
գրական խօսքը ազդեցութիւն չունի, անհասանելի
խրատը զայն շարական է: պարտաճանաչու-
թիւն, մարդկութիւն, ազգութիւն ամբողջում են
զրպան և փոր բառերով մէջ չը կարծէք թէ միայն
պառաւանք են այդ համոզմունքի, ոչ, նոր սե-
րունքը, անը ինտելիգենցիան նոյնպէս ազատ չէ
այդպիսի դադարակարգի: Եթէ մեր առաջարկէ
«Հայոց բարեգործական ընկերութեան» ամանա-
ճիւղ հաստատել Արաբիայում, ինչպէս Շու-
շում, պատասխանում են,— «այդ «ազաների»
գործն է: Ուսումնարաններ կանոնադրելը, և-
կամուսնիքի վրա հակելը:—Է՛հ ուրիշ խօսք չու-
նիս: Արքայապետ հողաբարձութեան անուամբ ըն-
կերութիւն մը հիմնելը, մտքը կնա առ ողորմելի-
ները, անտէր անօրհնութեան թաղանթում են դարա-
քաշ:—«Ամանքը դարձն ինձ է տուած»: Պ. վարժա-
պետ, դուք խոստացել էիք «Մեղուի» մէջ, խումբ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԵՐԿՐԱԳՈՐԾ ՄՇԱԿՆԵՐԻ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԹԻՒՐԻՒԹԻՍՅՈՒՅԻՑ

Սկսած այն օրից, երբ ուսումնարանի մէջ լրագրի
պահանջ դարձաւ, երբ հիմնովեց (Մշակ) լրագիրը
և երբ սկսեց ժողովուրդը արձագանք տալ լրա-
գրական խօսքին,—այն օրից մեր լրագրութեան
մէջ յարուցվեցան շատ տեսակ խնդիրներ: Բայց
մի հարց, այն է թիւրքիայից երկրագործ դաս-
կարգի գաղթականութեան հարցը, շատ սակաւ
հետաքրքրողներ ունեցաւ մեր մասուրի մէջ:
Որ թիւրքիայից եկած մշակները օրից որ սակաւ-
նում են ամեն քաղաքներում, այդ ամեն մարդ
կը խոստովանվի. բայց ինչ է ստիպում այդ թը-
շուսներին թողնել տուն, հայրենիք ու ցրվել
այս ու այն կողմ, սկսած Կ. Պոլսից, Չմրուսիա-
յից, մինչև Անդրկովկասի մեծ քաղաքները և կաս-
պից ծովի ափերը,—այդ հարցն է որ մեզ ամեն-
քիս պիտի հետաքրքրի և որ ինձ առիթ է տալիս
այժմ այս տողերը գրելու, յուսալով որ աւելի
ճիշդ տեղեկութիւն ունեցողները պարտք պիտի
համարեն այդ հարցի վերաբերութեամբ խօսել մեր
լրագրութեան մէջ:
Ապրիլի սկզբներում եկան Ալեքսանդրապոլ
40-ի չափ մշակի զիւղացիներ, որոնք, ինչպէս
պատմում էին, մտաւորապէս հարկը հողի էին
եղել, բոլորն էլ Մուշի շրջակայքից: Կրանք
մեծ մասը ուղղակի թիֆլիս են գնացել, միւս մա-
սը Բալու: Զատի էր տեսնել այդ թըշուսաւ արա-
բաճկներին, որոնք կարծես յախտնական անկճքով
դատաւարանում լինեն մշակութիւն անելու...
Այդ մշակներից մինչև մտեցայ և հարցրի թէ
«Ինչից ստիպված նրանք թողնում են տուն, հայ-
րենիք ու թաղանթում այս կամ այն երկիր. միթէ
նրանց պէս մի ժողովուրդ չէ կարող երկրագոր-
ծութեամբ պարսպել ու կառավարել, փոխանակ

կաղմը, ներկայացումներ տալ յօդուա թաղական
ուսումնարանաց, ինչու մտապաք.— Թէպէտ ինտ-
տացայ, բայց ընկերներս չօգնեցին, մէկ ծիծե-
հակով զարուն չի գար»: Պ. պ. հաշտուսներ, և-
րևափոխանի հայրենիքը վերջացրէք, ա՜նա տարին
մտնեմու է.— «տանն էլ որ անց կինայ, գործ ա-
նող չը կայ»: Յարգելի պատգամաւորներ. ձեզ
վրա ժողովուրդը մեծ վստահութիւն ունէր, որ
եկեղեցական կառուածոց վայելուչ կարգադրու-
թիւն մը անելէք, անհասանելի որոտորութիւնից ա-
րատելով, մեր ուսումնարանաց հիւթապէս սպա-
հովացնելու համար, և անցեալ տարիներու (1880
և 1881 թուականի) կառավարչաց հայրենիքը քըն-
նելու, արդեօք արդարացուցիչ նրա վստահու-
թիւնը.— «Ինչպէս չէ (ինքն պատտովանում եմ
իրրև պատգամաւոր) մենք ինտելիգենցի սարքիցինք,
որոտյութիւնը լարեցինք մէկ մէկու դէմ, զանազան
հակառակ կուսակցութիւններ կազմեցինք, մինչև
անգամ մեզանից մի քանի «ազաներ» (թուր
և օթիւն) ծածուկ հեռաւորեցին Ս. Սինօղին «թէ
15,000 ռուբլի տարեկան արհիւնք տացվում են
այդ կառուածները»: մի այլ պարսն (մեզանից)
զիւղորէից եկամտի ցորեանները գնողին յանձնելու
պատրուակով իր սրնթաց կտըն սահեցուց լը-
միածին, գուցէ այնտեղ իր վրա հաստատելու
կրկին անգամ կառավարչութիւնը կամ կապալա-
ւութիւնը, իսկ մնացեալ չէլզըներս (ս և է կու-
սակցութիւնից) ընտրեցինք մեր միջից («ազանե-
րից») երեք անգամ պատուաւոր պատգամաւորու-
թիւն, որոնք հասարակութեան ինչորագրով զիմու-
էին բարձրագոյն հողեր կառավարութեան, որ
բարեհաճին Արաբիայի ս. Փրկիչ եկեղեցու երես-
փոխանի տնօրէնութեանց յանձնելու յիշեալ կա-
ւուածները, համաձայն օրինաց, *) որպէս սեկա-

աստանդական կեանքով օտար երկիրներում թա-
փառելու:»
Այդ իմ հարցին պատասխանելով, մշակը ան-
տանելի հառաչանքներ արձակելով, սկսեց պատ-
մել ինձ թէ ինչ դրութեան մէջ է գտնվում նը-
րանց այժմեան տնտեսական վիճակը Թիւրքիա-
յում:
Իրանը ոչ թէ միայն պետութեան հպատակներ
են, այսինքն տեղութեան «խաբձ» տալով իրա-
ւունք ունեն այս կամ այն տեղը բնակվել, այլ բացի
տեղութեանից կան նաև երկրորդական բռնակալ-
ներ, որոնց ժողովուրդը հպատակվում է: Կրանք
քիւրդ ցեղապետներն են: Այդ բռնակալները ժա-
ռանգաբար տիրում են այս ու այն գիւղի ըն-
դարձակ արօտատեղիները և որպէս սեփականու-
թիւն վարձով տալիս նոյն իսկ բռնակալներին,
ստանալով համայնքից մի որոշեալ գումար: Այդ-
պիսով երկրագործ ժողովուրդը երկու կրակների
մէջն է խորովում. մէկը տեղութեան պաշտօնա-
ւորներն են, որոնք տեղութեան անունով կեղե-
քում, սպառում են նրա ամբողջ նիւթական ոյ-
ժը, իսկ միւրը քիւրդ շրջից: որոնք սոված
գաղերի նման գալիս են իրանց որսը զիւղատեղու-
Շատ անգամ, ինչպէս պատմում են եկեղեցիները,
այդ բռնակալները միմեանց վրա են յարձակվում.
հողերի և առհասարակ նիւթական շահերի տար-
բերութիւնը առիթ է տալիս նրանց մէջ արհուա-
հեղ կռիւների, որոնց վատ հետեանքները ընդուով
չէ կարելի պատմել: Հասկանալի է որ բոլոր գոր-
ծողութեանց մէջ մաշվող, վնասվող խաղող
երկրագործն է, հայ ժողովուրդը: Այդպիսի դէպ-
քերում թիւրքաց կառավարութիւնը մնում է ան-
տարբեր և իր այդ վարմունքով աւելի էլ նպաս-
տում է բարբարոսների կամայականութեանը. և
նրանք աւելի սիրտ առած, կատաղում են և
վրէժխնդրութեան թոյնը թափում անպաշտպան
երկրագործ ժողովրդի վրա:
Թիւրքիայում անձնապաշտպանութիւնը քրիս-
տոնեայի կողմից մի տեսակ բրէճական յանցանք
է համարվում. ում մօտ զէճքի մի հասն անգամ

կանութիւն Արաբիայի ս. Փրկիչ եկեղեցու և ո-
րոց կամուսններով պահպանվում են տեղուս աղ-
գային չորս երկսեռ ուսումնարանները, հակառակ
դէպքում...
Ընտրված պատգամաւորութիւնը իր քմահա-
ճութեամբ այնքան յետաճից իր ուղևորու-
թիւնը, (սպասելիք ունէր) որ ս. Նշմիածինը
կրկին անգամ իր առաձին կարգադրութիւնն
արաւ,—կոնստանտնուպոլի միջոցով կապալաւ տա-
լով յիշեալ կառուածները 14,155 ռուբլով տա-
րեկան հինգ տարի ժամանակամիջոցով. այսպէս
և վերջացաւ պատգամաւորաց գործունէութիւնը.
Իսկ կառավարչական հայրենիքայնաց կամ
պահանջող չը կայ:
Մեծագոյն խմբագիր, խմբագրաւոր խնդ-
րում եմ երկտողն մի անկիւն շնորհելու
ազգագուս «Մշակի» մէջ, իբրև բացատրութիւն
հասարակութեան առաջ իմ ստանձած պարտա-
կանութեան:
Աւետիս Արանեանց
Կառուածոց կառավարելու անմիջական իրաւունքը
պատկանում է երևափոխանին, որը ընտրվում է
ժողովուրդից: Ս. Սինօղն գրկելով երևափոխանին
այդ իրաւունքից, իր առանձին կարգադրութեամբ
կապալաւուով կամ կառավարչի ձեռք յանձնելով
այդ կառուածը, այն հետեանքն ունեցաւ, որ այ-
ժմ մեր ուսուցիչները վից ամսով առձիկ չեն
ստացել և հողաբարձութիւնը մի քանի հազարներ
փոխառութեամբ և իր գրպանից է ծախս արած.
Մտտաւած, որ հիմնականից վերը հողաբար-
ձութիւնը դրամական ճգնաժամ չունենայ և կա-
պալաւական վճարը ամբողջապէս յաճախել նո-
րան, մի օտարմարանաց առաջագիւտութեան և
պահպանութեան համար:
գտնվում է, սկսում են խոզարկութիւններն ա-
նելը Գործը սկսվում է կաշտակերութեամբ և
վերջանում է նրանով: Բայց վնչ այն անհատին,
որ ընդլիմարութիւն է անուս: Շարքի չէ անց-
նում անանց մի գիւղ թաղանթում, արտերը կրակ
ձգելու, մարդ սպանելու: Եթէ սպանողը հայ է,
իսկ սպանվողը ի սլամ, այդ ժամանակ զեաւուրը
ստիպված է լինում մի մարդու փոխարէն երկու
մարդ տալ, որոնց բանտարկում են: Իսկ եթէ
քիւրդներն են սպանում, նրանք մնում են անպա-
տիժ: Հէյց անցեալ ամսում քիւրդերը սպանեցին
երեք հողի հայերից. հայերը դանդաղեցան, բայց
նրանց ոչ ոք չէր լսում և շարագործները մնացին
անպատիժ:
Այս խօսքերը լսելով մարդ ինքն իրան հարց
է առաջարկում. միթէ կարող է լինել մի պետու-
թիւն, որի պաշտօնեաները ուղղակի աշխատում են
հպատակներին քանդել, կեղեքել և ոչնչացնել, ա-
ռանց հակառակ ուղեւնալու որ երկրի ոյժը կազ-
մում են ոչ թէ տեղութեանը ծառայող պաշտօ-
նեաները, այլ ժողովուրդը:
Կրանից կարելի է երկակայնել թէ ինչ դրու-
թեան մէջ են գտնվում Թիւրքիայի հայերը և թէ
ինչն է ստիպում թիւրքացայ երկրագործ ողորմե-
լի դասը երկրից երկիր թափառելու, լու համա-
րելով ազատ մշակութիւն անել, քան թէ իրանց
հայրենիքի մէջ բռնութեան տակ սարել: Եւ ու-
րիչ ինչ է մնում այնպիսի մի ժողովրդի համար,
ինչպիսի է թիւրքացայ երկրագործը, որ դառն
աշխատանքով լցնում է իր ամբարները, բայց այդ
վստուպը իրան չէ պատկանում, այլ նրան վա-
նելում են կամ տեղութեան պաշտօնեաները, կամ
առաջակ քիւրդն ու չէրկէսը...
Մարդ սակամայ ինքն իրան հարց է առաջար-
կում, թէ ինչ աչքով են հայում Կ. Պոլսի գոր-
ծիչները այս տեսակ ազգապիտան գաղթականու-
թեան վրա, կամ ինչ կերպ են վերաբերվում այդ
չոյս: աղաղակող, հայրենասուր և անձնու-
րաց էֆէնդիները. արդեօք չէն ստանում նրանք
իրանց «սիրած» հայրենիքի գաւակների մասին,

ՆԱՄԱԿ ԱՍՆԱՅԻՍՅՈՒՅԻՑ

Ապրիլի 26-ին
Սղնախը բաղաւոր է նրանով, որ այստեղ
թուրքերը բերում են զանազան մթերքներ և ծա-
խում էժան գնով, և այսպիսով թմադութեան
առաջն առնում. իսկ եթէ արանք չը բերէին, այն
ժամանակ պէտք է մնային վրաց գիւղացիների
յուսով, որոնք ամենայն ինչ մեզ վրա թմադ
գնով են ծախում: Թուրքերի բերած առաջին
հարկաւորութեան մթերքները սրանք են, ալիւր,
գառը, իւղ, պանիր և մրդեղէններ. գառը առ-
նում ենք սրանցից 2 ռ., այն ինչ վրացուց
դժուար թէ 5 ռ. առնէինք, պանիրը առնում ենք
պուրը 2 ռ., իսկ վրացուս պէտք է 4 ռ. տանք,
մէկ խօսքով վրացիները ամենայն ինչ մէկը եր-
կուսով են ծախում: Թէպէտ թուրքերը այսքան
օգուտ են տալիս տեղացիներին, բայց սրանք
թուրքերի հետ վարվել չը գիտեն, մանաւանդ
վրացիները, որոնք ուղեւնալով որ վրաց գիւղացի-
ները իրանց մթերքները ծախելով օգուտին տե-
ղացիներից, ճնշում են թուրքերին, որպէս զի այլ
ես չը բերեն իրանց մթերքները: Մեր խօսքերի
հաստատութեան համար բերում ենք այստեղ մի
օրինակ: Ամսիս 18-ին մի քանի թուրքեր պանիր
էին բերել տեղիս հրապարակի վրա ծախելու.
Ինչպէս ասում են, վրաց գիւղացիներից մէկը
մտեցել է թուրքերին և պանիր գողացել, սրա
վրա այս գիւղացու և թուրքերից մէկի մէջ կռիւ
պատահեց, բայց ներկայ եղողները ոչ մէկը չը
մտեցաւ համեստ կերպով բաժանելու նրանք.
վերջապէս ոստիկանատան քարտուղար պ. Խելա-
յով աղքատ վրացի, մտեցաւ և վրացուս պաշա-
պան հանդիսանալով իր հաստ ձեռնափայտով
այնքան տուեց խեղճ ու անմեղ թուրքերի գլխին
ու մէջքին, որ խեղճերը առանց ձայն հանելու

Ալեքսանդրապոլ

Պ. Բ.

երկրորդ ցրվեցան կարծիքով թէ դա գաւառապետն է, բայց երբ իմացան որ գաւառապետն է, մի քանի թուրքեր մտադրեցին գնալու գաւառապետի մօտ այս եղիլով ինչը յայտնեցին: Ինչ յայտնի չէ թէ ինչ հետեանք ունեցաւ, միայն այսքան կասեմ, որ խեղճեցի, իբրև վրացի, շատ պաշտպաններ ունի: Այսպիսի բաները շատ յաճախ են կրկնուում այստեղ, որի վրա դարձնում ենք ոտտիկանութեան ուշադրութիւնը:

Առհասարակ տեղիս վրացիները լաւ չեն վարվում այլազգիքի հետ, մանաւանդ հայերի հետ. պատճառն այն էր, որ կրտսեր բաժանվեցաւ և վրացիները հիմնեցին երկրորդ կրտսեր, որը հաստատ հիմք չունենալով այժմ փակվելու վրա է անդամները քրտթեան պատճառով և համարեա այժմ ոչ ոք չէ գնում այնտեղ, թէպէտ միայն ի ցոյցս այլոց են լուսաւորում: Այս կրտսեր անդամները հետզհետէ միանում են քաղաքային կրտսեր անդամներին հետ և այնտեղ են երթնելու թիւն անում, քանի որ անցեալ տարի աղուական կողմէ կրտսեր անդամները ոչ ոք չէր գնում: Ահա վերջապէս իրազործուում է մեր միտքը, որ մենք յայտնեցինք երկրորդ կրտսեր անդամներին մասին, և խորհուրդ տուինք միանալ դարձեալ և կազմել մի սլոք:

Առաջ խօսելով մեր կրտսերի վրա, մի և նոյն ժամանակ քաղաքային կրտսեր մի քանի պակասութիւններ հրապարակ հանեցի. այստեղ էլ մի և նոյն խօսքերը չը կրկնելու համար այսքան միայն կասեմ, որ դարձեալ մի և նոյն դրութեան մէջ է և թղթախաղութիւնը արագ քայլերով է առաջ գնում: Այս պակասութիւնների վրա աւելացնում եմ երկու բան. այն է, անդամները մէջ ընտրութիւն չը կայ չեն նայում ոչ հասակին և ոչ վարքին, և երկրորդ՝ որ կրտսեր ունենալով դրադարան, չունի դրադարանապետ. բանալին գտնուում է գանաղան անձանց ձեռքին, ով ուղեւնայ կարող է բանալին առնել, բայց անել և հարկաւոր գրեթէ վերցնել որքան կամենայ: Ահա այսպիսի անդամները շատ դրեք են կորած, իսկ լրացիները փոստի երկրորդ օրը այլ ևս չը կան սեղանի վրա: Սրա պատճառն այն է, որ դրադարանապետին ուժիկ չեն տալիս, իսկ եթէ ուժիկ տալին, այսպիսի անկարգութիւնները այլ ևս չէին լինի, և դրադարանապետը ստիպված կը լինէր լաւ պահպանելու թէ դրեքը և թէ լրացիները: Գարծում ենք սրա վրա կրտսեր ստարչիաների ուշադրութիւնը և խնդրում ենք որ ձանաչեն իրանց պարտաւորութիւնը, այսպիսի անկարգութիւնների առաջն առնեն և առաջ տանեն իրանց կրտսերը: Այստեղ պարտք եմ համարում շնորհակալութիւն յայտնելու կրտսեր ստարչիան ա. Յ. Գողապետցիին, որ ասելի սա է ուշադրութիւն դարձնում կրտսեր վրա և եթէ միւս ստարչիաներն էլ հետեւին սրա օրինակին, այն ժամանակ ամեն բան կարգին կը լինէր:

Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Մեզ խնդրում են յայտնել որ երկրորդ դասախօսութիւնը յօգուտ հայոց ընդհանուր ուսուցչական ժողովի կայանալու և երեքշաբթի օր. տարիքի 4-ին, երեկոյեան 8 ժամին, Արծրունու թատրոնում: Կարգալու են, պ. Ա. Բահաթրեանց «Յաղկոցի և նրա նշանակութեան վրա» և պ. Բ. Մելիք-Բեղաբեանց «Տարախոսիկ հիւանդութիւնների վրա»: Առաջին դասախօսութեան համար տոմսակ ունեցողները ունեն իրաւունք մի և նոյն ամսակով ներկայ գտնվել այս երկրորդ և նոյնպէս երրորդ դասախօսութիւններին: Մտացած տոմսակները ցանկացողներ կարող են ձեռք բերել պ. Մատթարեանի խանութում և Արծրունու թատրոնի կասսայում:

Քանի մի օր շարունակուում էր ՔԻՅԼԻՍՈՒՄ խոնաւ և անձրեային եղանակ: Այժմ եղանակը փոքր ինչ տաքացաւ:

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են: «Լսում ենք թէ խօսակցութիւն կայ Մարտարազանի ընկերութեան ուսումնարանի և դրադարանի միադարանի տունը երկարաւանի դարձնել, յարմարեցնելով այդ շէնութիւնը թատրոնական ըմպին էլ: Շինութիւնը քաղաքիս ամենալաւ տեղումն է գտնուում:»

ԱՐԳԻՆԱՅԻՑ մեզ գրում են: «Շիրակում օրից օր բարձրանում է այն գինը, որ պահանջում են է ղիկների տէրերը նրանց մարդու աւալու ժամա-

նակ և որ անուանվում է պաշտուխ: Այդ գինը բարձրացել է մինչև 350 և 400 ռուբլ: Եթէ հայրը փեսացուից կանխիկ չը ստանայ այդ փողը, երբէք խօսք չի տայ իր աղջկան ամուսնացնելու: Բացի այդ այժմ մի նորութիւն էլ է մտել մեզանում. աղջկայ հայրը 400 ռուբլ առնելուց յետոյ, պահանջում է փեսացուից իր համար էլ մի պաշտու մոխրագոյն դրապից, արշինը 7 ռուբլին: Իսկ պաշտուի օձիքը պէտք է անպատճառ լինի կարողը մահուղից: Այդ տեսակ սակարկութիւնների ժամանակ շատ անգամ ծագում են մեծ անհամաձայնութիւններ: Շատ անգամ էլ նշանված աղջիկը իր հօր կամակարգութիւնից և բռնակալութիւնից ստիպված, փախչում է մի այլ աղալի հետ, չը նայելով որ հայրը արդէն ստացել է իր 350, կամ 400 ռուբլ իր ուղած երկուստարկից:»

ԻԳՎԻՐԻՑ մեզ գրում են: «Վերջին ուսութիւնը քաղաքապետից յետոյ, այն է 1879 թվին, իզդրի գլավա պ. Ղանդոյանց և պ. Ա. Աւագանց նուիրաւորութիւններ էին հաւարում տեղութեան նաւատորմի շինութեան գործին նպաստելու համար և իրաւ հաւաքեցին թէ իրելիցի ընդի ժողովրդից և թէ տեղական ծառայողներից, ընդամենը մօտ 500 ռուբլ: Այս փողերի գործադրութեան մասին այն ժամանակից մինչև այժմ ոչինչ չը գիտեցինք: Միայն այժմ լսում ենք թէ իզդրի այդ նուէրները ժամանակին տեղը հասած չը լինելով, այլ նրանց ուղարկվելը ուշացած լինելով, այդ փողերը անմիջապէս յետ են ուղարկվել իզդրի և լուրի ծառայողները իրանց նուիրած փողերը կրկին յետ են ստացել: Իսկ իզդրիցի ընդի ազգաբնակչութեանը պատկանող նուիրատուներից և ոչ մէկը իր տուած փողը յետ չէ ստացել: Այժմ մենք համարձակուում ենք դառնալ մեզանից նուէր հաւաքողներին և խնդրել նրանց, որ եթէ փողերը նրանց ձեռքումն են, թող բարեհաճեն յատկացնել այդ փողերը մեր իզդրի դպրացիներին:»

Վերապի, մայիսի 2-ին հայ դերասանական խումբը Արծրունու թատրոնում է նպատա յուշարար պ. Մատթարեանի կը ներկայացնէ «Մերի», հեղ. Արուստի և «Էլ չարեանի», կամ երկու սերահար, փողովի հեղ. Է. Տեր-Ղրղոյանի: Պ. Մատթարեան տարվալ մէջ մի անգամ միայն յայտնուում է հասարակութեանը իբրև դերասանական խմբի անդամ, այդ նրա ընենֆիսի օրն է, մինչդեռ իւրաքանչիւր ներկայացման և կրկնութեան ժամանակ առաջին ախտասանը է կատարում իր յուշարարական համեստ դերը մէջ: Այսպիսի աշխատողները պէտք է վարձատրված լինեն և երկի հասարակութիւնը կը լցնէ թատրոնը պ. Մատթարեանի ներկայացման երկրորդ: Տոմսակները կարելի է ստանալ Արծրունու թատրոնի կասսայում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՐՎԻՆԻ ԹԱՂՈՒՄԸ

Գարվինի թաղումը մեծ հանդիսով կատարվեցաւ ապրիլի 26-ին Ուլիստմիստերի միաբանութեան գերեզմանատանը, որտեղ թաղուում են ամենաերեւելի մարդիկ: Պրօֆեսօր Գեկալի «Nature» ամսագրի մէջ մի նկատողութիւն տպեց, որ նուիրված է երեւելի դիտականի յիշատակին: Այդ յօդուածը մէջ ի միջի այլոց սպաճ է որ Գարվինի ամենաբարձր մտաւոր ընդունակութիւնները ունէր և մի բնատրութիւն, որ իր ազնուութեամբ նրա ընդունակութիւններից էլ բարձր էր:

«Ոչ թէ միայն Անգլիայի, շարունակուում է Գեկալի, այլ և Ֆրանսիայի, Գերմանիայի, Աւստրո-Ունգարիայի, Իտալիայի և Վիսցեալ Նահանգների մէջ ամենքը, որոնք ձանաչում են հասարակական կարծիքը, համոզված են, որ մտածող մարդկութիւնը խստաովանում է Գարվինի մեծ նշանակութիւնը: Մամուլի ներկայացուցիչները գիտեն, որ նրանց ընթացողների ամենամեծ մասը Գարվինի մահը չը կրկնեն իբրև մարդկութեան կորուստ և կը հետաքրքրվի նրա կենսագրութեամբ:»

Ամեն տեսակ կարծիքների տէր գրողները զարմանալի համաձայնութեամբ նուիրեցին գրուածներ մեր երեւելի հայրենակցի յիշատակին, որի նշանակութիւնը կենդանութեան ժամանակ պաշտօնապէս չէր ձանաչված անդլիական կառավարութիւնից: Այնու ամենայնիւ անդլիական ժողովրդի ինտելիգենցիայի ցանկութեամբ Գարվին իր մահից յետոյ դասվեցաւ այն մեծ մարդկանց կարգը, որոնք հանգիստ են առնում Ուեստմինստերի միաբանութեան մէջ:»

Գարվինի թաղմանը ներկայ են եղել Անգլիայի բոլոր երեւելի մարդիկ և օտար պետութիւնների ներկայացուցիչները:

ԱՆՍՐՈՒՆԳՍՐԻՍ

Աւստրո-ունգարական կառավարութեան քաղաքականութիւնը Բօսնիայի և Հերցեգովինայի մէջ երբէք համակրելի չէ եղել Ունգարիայի համար, չը նայելով որ այդ քաղաքականութեան ստեղծողը կոմս Անդրաշին է, որով ունգարացիք պարծնում են, գրում է «Толосъ» լրագրի թղթակիցը: Մինիստրութեան պահանջած արտաքց կարգի նոր կրեդիտը ամբողջ Ունգարիայի մէջ անբաւականութիւն պատճառեց: Թէպէտ Ունգարիան ամբողջ պետութեան ծախսերի 30% է վճարում, բայց այդ մասն էլ չափազանց ծանրաբեռնում է ազգաբնակչութեանը: Կառավարութեան դրամական նոր պահանջը խիստ յարձակունքների ենթարկեցաւ ոչ թէ միայն արմատական և ազատամիտ, այլ և չափաւոր լրագրիների կողմից: Իբրև օրինակ կը բերեմ «Egyetertés» չափաւոր լրագրի դատողութիւնները:

«Ուրեմն մեզանից պահանջում են, որ մենք Բօսնիայի մէջ ամրոցներ, զօրանոցներ և ճանապարհներ կառուցանենք, նկատուում է լրագրից: Բայց ինքը Ունգարիան ամրոցների պակասութիւն ունի Ռուսաստանի և Բուլղարիայի դէմ: Զօրանոցներ էլ մենք շատ քիչ ունենք, իսկ ճանապարհները անհրաժեշտ են Ալպեյի և Բանատի մէջ: Բայց այդ բոլորը ոչինչ նշանակութիւն չունի. մենք սկսում ենք Բօսնիայից և մեր փողերը այնտեղ ենք շարունակում: Արդեօք մենք բոլորս էլ չենք խելագարվել: Ինչ է մտածում Տիսսա, չէ՞ որ նա գեղեցիկ քաղաքացի է և ազգասէր է: Նրա սեփական այդիները մշակութեան կարօտ են, իսկ նա չըր ապաւանքներ է գնում և իր սե հողը այն տեղ է տանում:»

«Եսկայէս ինչի համար ենք ամրոցներ կառուցանում Բօսնիայի մէջ: Որպէս զի ստրկացնենք և մեզ սեփականացնենք մի ժողովուրդ, որ մեզ ձանաչել անգամ չէ կամենում և որ ինքնավարութեան իրաւունք ունի: Եւ այդ բանը անում ենք մենք, որ դեռ նորերում մեր սեփական արևելի գնով պետական ազատութիւն ձեռք բերեցինք: Այդպէս վարվում է մինիստր Տիսսա, որ միշտ շքեղ նախագաւորութիւններ է արտասանում ազատութեան մասին, բայց վարվում է աւելի վատ քան թէ աւստրիական յետադիմականները, որոնք մի ժամանակ կամենում էին նուաճել Իտալիա և ստրկացնել իտալական ազգասէրներին:»

Պատգամաւորների ժողովը երկու միլիոնով փոքրացրեց կառավարութեան պահանջած կրեդիտը և այդ բանն արին ոչ թէ ընդդիմադրականները, այլ կառավարութեան կուսակիցները: Ինքը կոմս Անդրաշի թէպէտ պաշտպանում էր կառավարչական օրինադիւր, բայց և այնպէս նրա յարաբերութիւնները ընդհանուր մինիստրութեան հետ բաւական

ընդդիմադրական էին: Նա չափազանց խիստ յարձակվեցաւ գրաւված նահանգների վարչութեան քաղաքականութեան վրա և ցոյց տուեց կառավարութեան գործած բազմաթիւ սխալները: Անդրաշի կարծիքով, ամենակոպիտ սխալը զինուորական օրէնքի հրատարակելն է: Ընդհանուր զինուորագրութեան օրէնքը, արտաքին գործերի նախկին մինիստրի կարծիքով, անիրագործելի է Բօսնիայի և Հերցեգովինայի մէջ, որովհետեւ նա չէ համապատասխանում ոչ այդ երկիրների պայմաններին և ոչ ազգաբնակչութեան բնակչութեանը: «Քանի որ սխալը գործված է, ասեց Անդրաշի, և օրէնքը հրատարակված է, պետութեան պատիւը պահանջում է, որ նա գործադրվի: Բայց օրէնքը չափազանց ընդարձակ է և գործադրութեան ժամանակ պէտք է նրան սահմանափակել:» Անդրաշի կարծիքով, աւելի լաւ է Բօսնիայի մէջ միլիցիայի կամ ժանդարմների բաժնի նման մի զօրախումբ կազմակերպել: Ինչ կը վերաբերի Բօսնիայի և Հերցեգովինայի վարչութեանը, նա չափազանց թանգ է նրատուում պետութեանը, որ անկարող է այդպիսի մեծ ծախսեր անել:

Անդրաշիի ձառը մեծ տպաւորութիւն գործեց թէ աւստրիական և թէ ունգարական քաղաքական շրջանների մէջ:

Ձը նայելով Անդրաշիի բողոքին զինուորական օրէնքի դէմ, պատերազմական մինիստր Բիլանդ յայտնեց ունգարական ժողովին, որ միայն Բօսնիայի և Հերցեգովինայի մէջ կը սկսեն զինուորներ հաւաքել: Այդ գործի համար զինուորական իշխանութիւնը արդէն մի քանի պատրաստութիւններ է տեսել: Բիլանդի կարծիքով, զինուորների հաւաքելը Բօսնիայի մէջ արգելքների չի հանդիպի, մինչդեռ Հերցեգովինայի մէջ մի քանի դժուարութիւններ կը ծագեն: Հարկաւոր ենք համարում հաղորդել ընդհանուր կարծիքը, որ զինուորների հաւաքելը ոչ թէ միայն Հերցեգովինայի, այլ և Բօսնիայի մէջ նշանաւոր դժուարութիւններ կը ծագեցնի: Եթէ կոմս Անդրաշի զինուորական օրէնքը «կոպիտ սխալ» է անուանում, ուրեմն մինիստրութիւնը աւելի էլ մեծ սխալ կը լինի գործած, երբ կը սկսի գործադրել այդ օրէնքը և այն էլ այդքան շուտ: Թէպէտ Արիօշիի ապստամբութիւնը ձնշված է, բայց հարաւային Աւստրիայի ազգաբնակչութեան տրամադրութիւնը այնպէս է, որ հարկաւոր է մեծ զգուշութեամբ գործել:

ԳԵՐՄԱՆԻԱ

Ապրիլի 27-ին բացվեցաւ դերմանական պարլամենտը, հաղորդում է «Толосъ» լրագրի թղթակիցը: Այդ առիթով արասասանած ձառի մէջ մի քանի նշանաւոր տեղեր կային, որոնք իրանց վաւ դարձրին ընդհանուր ուշադրութիւնը: Ամենից առաջ այդ ձառը հաղորդում է, որ, եթէ պարլամենտը չի ընդունի ծխախոտի մեղմաւորութեան օրինադիւր, կառավարութիւնը միջոցներ կը գտնի ծխախոտից այլ միջոցներով եկամուտ ստանալու համար, որոնք աւելի ծանր կը լինեն ծխախոտ գործածողների համար: Ամենքին զարմացրեց և այն յայտնութիւնը, որ, եթէ պարլամենտը մերժի պետական եկամուտների մի քանի ուրիշ աղբիւրներն էլ, կառավարութիւնը ստիպված կը լինի հրաժարվել հարկաւորութեան ձեռի փոփոխելուց: Այդ յայտնութիւնից երևում է, որ իշխան Բիսմարկի գիտէ թէ պարլամենտը ինչպիսի դիրք կը բռնէ նրա առաջարկութիւնների վերաբերութեամբ և որ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՏԱՑՎԵՑԱԻ մեծ քանակութեամբ և ծախվում են 25% էժԱՆ քան թէ ուրիշ տեղ. թէյ, բրինձ, ԱՄԱՆՆԵՐ, վահա, կրակի, վերաբերողներ, կլեմիս, թուղթ, ԳԻՉՆԵՐ, հայկերի, թամբեր, ձիասանդրեր, մահճակալներ, ԱՐԿՈՒԿՆԵՐ, փոշիներ սամովար մաքրելու և լուացքի համար և այլն:

Անգլիական խանութի մէջ:

1-8

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԲԱՆԿ

1882 թ. ՄԱՅԻՍԻ 1-ԻՅ ՎՃԱՐՈՒՄ Է

Table with 2 columns: Description of items (Աւանդների համար, Ընթացիկ հաշույլ, Գրահանջ, Վեց ամիս պայմանագրով, Մի և աւելի ամիս) and Interest rates (4 1/2%, 4%, 5 1/2%, 6%).

ՄՈՒՐԱԲԱ, շաքարի ձուաներ, պանիր-չեստեր, խաւար և այլն: Ծախվում են շատ էժան:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻՄԷՉ

Նոյն տեղ ծախվում են. բազիլաթու-մահճակալ 8 ռ., ամբողջ ՀԱԳՈՒՍՏ 12 ռ., չը թրջող վերաբերողներ 6-18 ռ. և մեծ քանակութեամբ ՐԷՎՈԼՎԵՐՆԵՐ, դանակներ և այլն:

5-10

Գ Ա Ի Թ Բ Է Կ Ի
III ԳԻՐԲԸ
Բաղկացած է 563 երեսներից
ԳԻՆՆ Է 2 ԲՈՒԲԸ
Վէպի այս հատորի մեկամիայնակ-թիւնը պատկանում է բացառապէս ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԻՆ: Օտարաբարդացիք կարող են զիմել այս հատորով.
"ЦЕНТРАЛЬНАЯ КНИЖНАЯ ТОРГОВЛЯ" (на Головинском проспекте въ д. Мириманова, №№ 3 и 4).
ՎՏԻՖԼԻՍԷ 10-10

Այս տեսակ ճիգրան նազարեանի հրատարակութիւնների VI զբոյրը 2. Կիկիեն-սի շարք և Սիկեստր թարգ. օր. Ն. Տեր-Մարկոսեանի: Գրքային իրեն յաւելուած սպորաճ են զրականութեան վերաբերեալ յայտարարութիւններ, առաջարկութիւններ և այլն:

Գինն է 15 Կ.

Հասցէն Թիֆլիս. Կիգրանու Նազարյանց.

Ապրիլի 15-ից կենտրոնական զրադարանում, որ գտնվում է Արծրունու գաղթի թիւ 149 և 150 բազմաճ է հայերէն գրքերի բաժանումը: Ամսական վճարը մի գրքի համար 30 Կ., երկու գրքի համար 50 Կ., իսկ երեք գրքի համար 80 Կ.:

Գրաւ պէտք է թողնեն 2, 3 կամ 5 րուբլ, նայած քանի գիրք է ստանում: Գրադարանը բաց է ամեն օր առաւօտեան 8 Ժ. մինչև երեկոյան 8 Ժամը:

9-10

ՄԻ ՀԱՄԱՎՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ.

Որ մայիս ամի կեսից մինչև ամառվայ վերջը բնակվելու է ՄԱՆԳԼԻՍՏՈՒՄ, յանձն է առնում ՊԱՐԱՊԵԼ թէ կրկնութեամբ և թէ դասերով գանազան ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ և թէ փոքր երեխաների հետ:

Մանրամասն ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, այսինքն՝ ո՞ւմ և ի՞նչ հասակի երեխայի հետ պէտք է պարապել, ի՞նչ առարկաներից, ո՞րքան Ժամ և այլն և այլն խնդրում են ցանկացողներին թողնել "Մշակի" խմբագրատան մէջ, ուր կարող են գտնել և յիշեալ ուսանողի հասցէն: 15-15

ԵՐՈՊԱԿԱՆ ԱՊԳԱՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ
ՎԵՐՈՒՄ ԵՐՈՊԵՅԻՍԿԻՅԻ ԵՄԵՐՈՎԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒՄ Է
Արժուան. գաղթի համար № 144
ՎԱՍԻԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԻՆ
ՏՕՒՆԻՆԵՐԸ ԵՒ ԵՐՁԱՆԱԿՆԵՐԸ:
ՎՏԻՖԼԻՍԷ 31-60

Въ Редакціи газеты «МШАКЪ»
Продается
БРОШЮРА
"ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ."
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ
ՄԻՆՉԵՒ ԱՄՍՎԱՅ ՎԵՐՋԸ
ՄԱՏԻՏԵՐ 8 Կ. զիւժիւր, ԾՐԱՐՆԵՐ 3 Կ. հարկերը, սապօն 3 Կ. հատը, արևի ժԱՍՏՈՑՈՑՆԵՐ 50 Կ., ԵՂՔԱՆԵՐ (նոր ուկուց) Ժամացոյցի համար 50 Կ., կրաններ 10 Կ., ջրի ամօններ 30 Կ., կէօր 25 Կ., կախարաններ 4 Կ., ՖԻՏԻՍՆԵՐ 3 ռ., ՏԵՐՏԻՆԵՐ 1 ռ., հայկերի 35 Կ., վարաբերներ 4 ռ., պիշակներ 6 ռ., ԱՄԲՈՂՋ ՀԱՎՈՍՏ 13 ռ., զիւրկներ 1 ռ., չը թրջող վերաբերողներ 6 ռ., շէտակա 90 Կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 Կ., կանանց և տղամարդկանց ԳՈՒԲԱՆԵՐ 2 ռ. 50 Կ. զիւժիւր, ՄԵՂԱՍՏՈՒՄ 32 Կ. անգլիական ֆուտոլ, կանֆետներ 40 Կ. ֆուտոլ, ԳՐԱՊ, արևի ԿՕ, ԱՐՔՈՒՆԵՐ, բրտանական մետաղի առարկաներ և այլն կիՍՍԿԵՆՈՎ, մանր, մուրաբա և այլն շատ էժան:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ
ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱՂԵՐՅՑ:

26-50

Մի ՏԻԿԻՆ, որ զիւժիւր ֆրանսերէն լեզու և ուղեորով և արտասահման, փնտրում է մի ՀԻՌԱՆԳ կամ ռեզիդենտ, կամ երեխաներին խնամելու վարձատրութիւն չէ խնդրում, այլ ձԱՆԱՊԱՐՀԱՄԱՍՍԸ գնացողների հաշուով Հասցէն. ԳՕՐԺԻՆՍԿԻ փողոց, ուսումնարան Սաղիչի, տուն թա-մանչիկի № 6:

3-3

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՏԱԿ
ԳՕՐԺԻՆՍԿԻ ԱՐՔԱՅԻՒՄԻ ՎՐԱ, տուն ճարտարագետ Բէյթի: Գրասենյակը բաց է առաւօտեան 9 Ժամից մինչև 3 Ժամը կես օրից յետոյ և երեկոյան 7-10 Ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներէրց:

"ВОСТОЧНОЕ ОБОЗРѢНІЕ"
Еженедѣльная газета безъ предварительной ценз. под ред. Н. М. Ядринцева.
ИЗДАНИЕ ПОСВЯЩЕННОЕ ЖИЗНИ ПРОВИНЦІИ ОКРАИНАМЪ
ВЫХОДИТЪ СЪ 1-го АПРѢЛЯ, ЦѢНА 8
Содержание №№ 1, 2 и 3: Востокъ и Западъ В. П. Васильева.—Колонизаціонный вопросъ на окраинахъ.—Что такое Поземельная Община. С. Я. Капустина.—По поводу 300-лѣтія Сибири Е. В. Максимова.—Центръ и окраины. С.—Русскій Востокъ и его будущее.—Провинціальный вопросъ и переселенія.—Желтый вопросъ въ Америкѣ и въ Сибири.—Значеніе области въ русской жизни.—Беллетристика: Странникъ на золотомъ озерѣ. Ядринцева.—Гонимые (изъ сибирскихъ нравовъ). Н. И. Наимова.—Воспоминанія и грёзы восточнаго фельетониста.—Послѣднія новости по переселенческому вопросу.—Сибирскіе вопросы и реформы.—Хроника.—Политическіе обзоры и вѣсти съ востока.—Обзоръ общественной и провинціальной жизни.—Корреспонденціи изъ Тобольска, Томска, изъ Барнаула, съ Алтая и т. д.—Хроника жизни на педѣлю.—Критика и библиографія.—Биржевыя извѣстія.—Объявленія.
ПОДПИСКА ВЪ КОНТОРѢ РЕДАКЦІИ, ИВАНОВСКАЯ, д. 13, кв. 18.
ВЪ ТИФЛИСѢ Подписка принимается въ газетномъ Агентствѣ В. ШАВЕРДОВА.

JOURNAL D'ORIENT
HEBDOMADAIRE
Paraissant a VIENNE (Autriche)
ABONNEMENTS: 1 an . . . 8 roubles
6 mois. . . 4 —
REDACTEUR EN CHEF F. Salles.
1. Weihburggasse 9. (Vienne)

Մի ջի փողոց, Կաթօլի չեսսկայա փողոցի անկիւն թիւ 13.
Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻՆՆԱՅԻ ՄԵՐԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ կրԱՎԱՍԵՆԵՐ 8-30 ռ., չամաղաններ 250-25 ռ., սակփոյաժներ 1. 30-12 ռ., սոււն դուկն եր ճանապարհի 6-35 ռ., մարաններ (погребцы) 6-25 ռ., սամօվարներ 60 Կ.—1.25 ֆուտոլ, կուխոնի պղնձ ամաններ, Գերմանիայի երկաթէ էմալով ամաններ, ու մի վալի կն եր մրամօրնի 38 ռ.—75 ռ., հրացաններ երկու լուանի 6-32 ռ., ու վոլվերներ ամենայն տեսակ 3. 50-30 ռ., պատրոններ. (գուլաններ) ըզվոլվերի, սիգար Բէնգարդի ֆարբիկց. պապիրոս և թամբաբու կուշարովի զիւրի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՑ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկիտ. (սուխար շայու և կաֆէի) ԷՆԵՄԻ. ԿՕՖԷ ԷՆԵՄԻ և ՄԻԿԵՐՍՈՒՄԻ. Պետերբուրգու 40-1 ռ. 25 Կ. հայկերի ամենայն տեսակ 28 Կ.—240 ռ., պրորկայ զիւրի ամանների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) զուլթուկ (пучкъ), պալտաներ սամօվարի և շայու, գանակ շանգու գանազան ֆարբիկաների 1 ռ. 20 Կ.—25 ռ. զուժիւր. զրչակիժներ 1 ռ. 80 Կ.—5-60 Կ. զանակ ջրի 1-60 Կ.—12 ռ., դանակ հացի 20 Կ.—1 ռ., հատը, կուխոնի 1-40 մինչև 3-20 Կ. պրիբոր. միս կարելու մաշիւր. Անգլիական ութներ, Բրտանական շայիկներ, կաֆէի-նիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտրներ-չուր մաքրելու, կրամալ կարթիկներ 18 Կ., վաքս ֆրանսիայի ծակից, թուղթ փոշու, կանկերաներ, սուրբուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակիժ, քարեմատիտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիներ, գրչակներ սեղանի և շայու ֆրաժէ, վարչակի և բրտանականի գուժիւր 1-50 Կ. մինչև 12 ռ., և շայու 45 Կ.—5 ռ., չու-միչիէք 45 Կ.—5 ռ., շամաղաններ ամեն տեսակ 25 Կ.—12 ռ. Չուխտ, պրո-սապրիկաններ վարչակու, ԲԵՅՆԻ ԿԱՂՕՆԵՐ, ամեն տեսակ, գուլթաններ կանանց և մարդկերանց 15 Կ.—50 Կ. Չուխտ, շայիկներ, մարդկերանց գալուստիկներ, գնտիկներ 35 Կ.—4-50 Կ., հատ, անձրեկի և ջրի. սանդղի շր-մայու ոսկորէ, գուտապրիչովի և փայտէ, շոտկաներ զիւրի, շրի, սապրիկ, պոլի և կարտի համար. չուլթի թէլ (бумага) մատուկի կօժի և շալէ (гарусы) ֆէ-չատիէք մարդկերանց և կանանց, պորտաններ, քիտաներ, պապիրոս ամաններ և մանր գոլաններէնի սպարաններ, սապոն ամեն տեսակ 3 Կ.—30 Կ., կտոր, հոտալէտ ջրեր, պուրպա, Գլիցիերին ջրի քաջալի, հոտալէտ պարաշիկներ ԿԻԼԵՐԻ ԱՐՔՈՒՍՏՈՐԻՑ: և այլն և այլն:
Վաճառականներին առանձին պայմաններով և զիւրումով վերադառնալ սա-րանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԻԼ ՏԵՐ ՆԻԿՈՂՈՍՆԱՆԻՑԻ պահեստում. (ՎԵՐՏԿԼԱԾԻ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի ան-կիւնում թիւ 13.
Օտարաբարդացիք կարող են զիմել հետեւեալ հասցէով. Թիֆլիս Կի-խալու Մ. Երթ-Նիկոցօսու. 41-180
Մի ջի փողոց, Կաթօլի չեսսկայա փողոցի անկիւն թիւ 13.